



# ԲԱԶՄԱՎԷՊ

Է. ՏԱՐԻ. ԹԻԻ 19.

1849

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

8

Արեգի վրայ ունեցած պարտերնիս :

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ կրօնքը՝ որուն մէջ ծնանք, մեծամեծ պարտերը դրած է վրանիս. նայեցէք որ զանոնք կատարելու անփոյթ չըլլաք. բայց աւելորդապաշտութենէ և յամառութենէ ալ ըզդոյշ կեցիք. եկեղեցւոյ ճշմարիտ վարդապետութեան և ձեր ուղիղ խղճմտանաց աղէկ մտադրութիւն ըրէք :

Արօնքը թէ և մոլար ըլլայ, միշտ փափուկ և պատկառելի բան մըն է. ուստի զգոյշ կեցիք որ ձեր կրօնքը չունեցողները ջնախատէք ու չարհամարհէք. թէ որ դիտէք թէ մէկը մոլորութեան մէջ է, խնդրեցէք Վրտուծմէ որ անոր սիրտն ալ լուսաւորէ : Զըլլայ թէ չարիկ չեղած տեղն ալ ելէք կրօնից

վրայ վիճաբանութիւն ընէք մոլորեւոյ հետ, որով մեծամեծ չարիք և անհաշտ թշնամութիւններ ծագած են մարդկանց մէջ, և օգուտ գրեթէ ոչ երբէք տեսնուած է : Այնպէս կրօնքի սրբազան պարտերուն անփոյթ եղողներն ալ՝ դուք մի դատապարտէք. Վրտուծոյ միայն կ'իյնայ այսպիսի բաներուն դատաստանը :

Այն խօսքով, ուրիշներուն պակասութիւնները միայն անոր համար տեսէք՝ որ դուք զգուշանաք. անոնց անկումը տեսնելով՝ նայեցէք որ դուք չիտակ քալէք :

(Ժ) Ե օրինաւոր զոտարձանութիւնները օգտաւոր  
էր ու հարկաւոր էն :

ԱՍՏՈՒԱԾ մեզի պատուիրեր է՝ որ  
կիրակի ու տօն օրեր աշխատութեանց  
ետեւ չըլլանք, պէտք է որ ամէնքնիս ալ  
աս ձայնին հնազանդինք : Տիեզերաց  
մէջ անգործ էակ չկայ, բայց ամէնքն  
ալ իրենց հանգստեան ատենն ունին .  
ուստի յոգնած ու բոլոր շաբաթը աշ-  
խատութեան ետեւ եղած մարդու մը  
համար՝ հանգստեան օր մը հարկաւոր  
և օգտակար է . անանկ որ՝ սուրբ կրօնք-  
նիս ալ այս բանը պատուիրած չըլլար՝  
կրնայինք խելքով ալ ասոր հարկաւոր  
ութիւնը ճանչնալ :

Կիրակի ու տօն օրեր՝ սուրբ եկեղե-  
ցոյ մեր վրայ դրած հրամանները կա-  
տարելէն ետքը, կրնաք ձեր հասակին  
վայելուչ զուարճութեանց և զբօսանաց  
ետեւ ըլլալ, ինչպէս քալելու, անմեղ  
խաղեր խաղալու, մարմնոյ հրահանգ-  
ներ փորձելու ու զուարճալի գրքեր կար-  
դալու, և այլն . բաւական է որ ինչ  
պէս ամէն բանի՝ նմանապէս անոնց մէջ  
ալ խելք բանեցընէք գէշը աղէկէն զա-  
տելու, հարկաւորն անպիտանէն որոշե-  
լու : Ինդհանուր կանոն մը ըլլայ ձեզի,  
սիրելիք, որ ամէն բան գործելու կամ  
խօսելու ատեննիդ՝ մտքերնէդ մէյմը  
անցընէք որ եթէ ձեր ծնողքը կամ ու-  
րիշ պատուաւոր ու պատկառելի անձ մը  
վրանիդ հասնէր՝ արդեօք ձեր գործա-  
ծէն կամ խօսածէն պիտի ամբնայիք,  
ու պիտի զղջայիք զրուցածնուդ վրայ :  
Աւստի ինչ որ մարդկանց առջև բաց  
ճակտով կրնաք գործել, մի վախնաք՝ օ-  
րինաւոր է ըրածնիդ . իսկ որ բանն որ  
չէք ուզեր որ ուրիշներն իմանան, գէշ  
է՝ մի հետեւիք : Ձեր խղճին ազգարա-  
րութեանցն մօտիկ ըրէք ու ամենեւին չէք  
մոլորիր :

Վիշերն որ սկսի վրայ հասնիլ, ջանա-  
ցէք որ լուսոյն հետ ձեր զբօսանքն ալ  
լրմբնան ու տնկերնիդ քաշուիք . գիշե-

րուան զբօսանաց մէջ չեմ գիտեր ինչ է՝  
բան մը կայ որ չենք կրնար օրինաւոր  
ըսել . որովհետեւ շատ մարդ կէսօրը  
չկրցածը՝ իրիկուան մթութիւնը իրեն  
չարութեանը պատրուակ առնելով՝ հա-  
մարձակ կը գործէ . ու առտուն գիշե-  
րուան ըրածին վրայ կը զղջայ : Բայց  
դուք մի մոռնաք, սիրելիք, թէ երկրորդ  
օրը աշխատիլ ուղղղին համար՝ քունը  
շատ հարկաւոր է, ու թէ՛ երկրնցած  
զուարճութիւնները ծանր աշխատութե-  
նէ ալ գէշ են ու տաղտկալի : Աս կանոնս  
չբռնող պատանիք, շատ անգամ երկրորդ  
օրն ալ առջի գիշերուան անկարգ զուար-  
ճութիւնները կը կրկնեն . աշխատիլ  
չեն սորվիր ու միայն ծախել կը նային :  
Այնպիսեաց վախճանն ալ յայտնի է,  
և ձեզի համար զգուշութեան օրինակ :

(Ժ) Ե օր ձեզի զրուցած խրատներուս  
մօտիկ ընէք, ու վարքերնիդ շտկելու փոյթ  
ունենաք, տարի մը չանցնիր որ կը սկսիք  
ձեր աշխատանքին արդիւնքը վայել, ու  
կտոր մը շաբաթէք առնուլ ձեր վար-  
պետէն : (Ժ) Ե օր կարօտ ծնողաց զաւակ  
էք, պէտք է անոնց յանձնէք ձեր վաս-  
տակը, որով կարենաք կերպով մը ե-  
րախտագէտ ըլլալ, ու իրենց ձեր վրայ  
ունեցած հոգոցն ու խնամոցը պզտի փո-  
խարէն մը ընել : Բայց թէ որ կարօտ  
չըլլան ու ձեր վաստակածը մասամբ կամ  
բոլորովին նորէն ձեզի դարձընեն, նայե-  
ցէք որ ձեր վրայ ունեցած վստահու-  
թիւնն ին փուճը չհանէք :

Օ գեստնիդ մաքուր ըլլայ՝ բայց ա-  
ռանց զարդարանքի . պատանիք մաքուր-  
նին կը դնեն թէ փառաւոր հագուիլ կա-  
պուիլն է վայելուչը, բայց տարիքնիս որ  
առնուն՝ իրենց կարծեացը ստութիւնը  
լաւ կ'իմանան . ուրիշներուն հաճոյ ու  
սիրելի ըլլալու համար կը կարծեն թէ  
զարդարանքով միայն ու զաւծնուն պիտի  
հասնին : Բայց շատ կը խաբուի ով որ  
այս վախճանին հասնելու համար կարող  
զութեան վեր ծախքեր ընելու ետեւէ  
կ'իյնայ, և կամ փուճ առնէ կ'անցընէ :

Մի մոռնաք, սիրելիք, որ զարդարան-  
քի համար ծախուած բաներուն շատին  
զինք ծանր կ'ըլլայ, իսկ տեսքը անոր հա-

մեմատուութեամբ գրեթէ ոչ ինչ : Ըստ անգամ կոկ ու պարզ դիպակէ զգեստ մը աւելի վայելուչ կ'երևնայ քան թէ սուղ սուղ գնուածներն :

Ինչ նիւթիս վրայ քիչ մը երկայն խօսեցայ սիրելիք , տեսնելով որ մեր դարուն գլխաւոր պակսութիւններէն մէկն է ասիկայ , որ իշխանն և ռամիկը միապէս փառաւոր հագուելու ջանք ունին : Բայց դուք մի խաբուիք , հապա մըտքերնիդ դրէք որ զգեստով ուրիշը չէ թէ միայն չէք կրնար խաբել , այլ նաև ծիծաղելի կ'ըլլաք : Ի՞նչն նայեցէք որ հագած զգեստներնուդ վրայ անհոգութեան ու աղտոտութեան պզտի նշան մ'ալ չտեսնուի :

10

Երբարեխառնութեան փասնէր :

ԱՐԴՎԱՆՑ մէջ ախտ մը կայ որուն անունն ալ բերանս առնելու կ'ամբնամբայց համառօտ կերպով մը յիշեմ՝ անոր տգեղութիւնը ձեզի ցուցնելու համար : Վիսովութիւն կ'ըսեն այն ախտին , որ առողջութեան ալ ու հարստութեան ալ մահաբեր ժանտախտ մըն է . մարդուս խելքը գլխէն կ'առնէ ու անբաններէն աւելի անարգ կ'ընէ : Տեսած էք գինով մարդ մը որ գինետունէն ելած գլորելով զարնուելով կ'երթայ խօտի մը վրայ կ'իյնայ կը խորդայ : Տեսնողը կը կարծէ թէ յանկարծական հիւանդութեամբ մը զարնուած է , կը փութայ որ դեղ ու ճար մը ընէ . բայց կ'իմանայ որ գինովութեան ախտն է որ զինքը հոն փռեր է . կը ցաւի հոգւոյն ու մարմնոյն վրայ ու կը թողու կ'անցնի : Ի՛՜՜ , սիրելիք , դուք ալ մտադրութեմբ ու արհամարհանօք նայեցէք մէյմը այն տխուր տեսարանին վրայ , ու մտածեցէք որ դուք է այդ խեղճ՝ մարդն ալ իր պատանեկութեան ատենը ձեզի պէս զգուշաւոր էր , բայց իր չար ընկերները՝ զինքն այս աստիճանին հասուցին . հիմայ ախտին ինչուան խոր յատակն է իջեր , ուսկից վեր ելլէն ամենադժուարին է , չըսեմ անկարելի :

11

Խաղախորութեան սոսկալի հեռանդներ :

ԽԱՂԱՍԻՐՈՒԹԵԱՆ ախտին համար ալ ինչ զրուցեմ սիրելիք . մէկ մահապուշակ կիրք մը , անօրէն փափագ մը որ ամէն տեղ մտեր ու ամէն տեղ անթիւ ու անհամար փնտնելու ըրեր է , կրակ մը որ ահագին տներ այրեր փճացուցեր է : Ի՞նչ որ ինքզինքը խաղի տուեր է , մեծ թշուառութեան մէջ է՝ որ ինքը չիմանար . իրեն զրուցելիք մը չունիմ , գիտեմ որ ինքն ալ մտիկ ընելու կամք չունի : Երեսնութիւն ու անհնարին մոլեգնութիւն մըն է՝ որ ոչ յաջողութեան մէջ ոչ ձախորդութեան մէջ իրմէն կը զատուի , ինչուան որ բոլորովին չկործանէ :

Խաղամոլը կը տեսնէ ու կ'իմանայ ըրած կորուստը , կիրքը թող չտար որ ձեռքը ետ քաշէ . խղճմտանքը զինքը կը յորդորէ որ արթննայ ու չորս կողմը նայի , աչքը դարձնէ ու տեսնէ մէյմը մօր ու կնոջ ճիչն ու արտասուքը ու անմեղ տղայոց յուսահատութիւնն ու ցաւը . բայց ինքը կամաւ ճշմարտութեան ձայնը չլսելու համար իր ականջը խլացուցեր է : Իրաւ է որ այս ախտին փնտասակար բերումը դեռ ձեզի անծանօթ է , բայց դուք խաղասէր ընկերներէ հեռու կեցիք . ամէն ախտ ալ պլըշտրկող է՝ ու ամէնն ալ թշուառութեանց աղբիւր , բայց խաղասիրութիւնը ինչուան անհնարին չարագործութեանց պատճառ եղեր է :

Ա. ԹԻՒՍ